WATERBOYS (2001)

**91 րոպե**

Տարիքային սահմանափակում՝ 16 տ.

***Սցենարի հեղինակ և ռեժիսոր՝ Շինոբու Յագուչի***

***Դերերում՝ Սատոշի Ցումաբուկի, Հիրոշի Տամակի, Տեցուրո Միուրա, Կոհիչի Կոնդո, Տակատոշի Կանեկո, Այա Հիրայամա, Կաորի Մանաբե, Նաոտո Տակենակա***



(c)2001 FUJI TELEVISION, ALTAMIRA PICTURES, TOHO, DENTSU

Լողի դպրոցական մարզիչը՝ երիտասարդ և համակրելի մի աղջիկ, տարված է մեկ գաղափարով. դպրոցին կից ստեղծել սինխրոն լողի խմբակ և մեծ շոու կազմակերպել քաղաքում: Նա ունի ընդամենը երեք դժվարություն: Նախ՝ քոլեջը արական է, և նրա բոլոր սաները տղաներ են: Երկրորդ՝ այն հինգը նրանցից, ովքեր համաձայնել են օգնել նրան, ահավոր լողորդներ են: Եվ երրորդ՝ նա հանկարծ հայտնաբերում է, որ հղի է: Խառնաշփոթ ստեղծելով՝ աղջիկը հեռանում է ասպարեզից, սակայն նրա «որբացած» սաները չեն հանձնվում և փորձում են իրենց ուժերով հիանալի շոու կազմակերպել քաղաքում: